

ՇԻՐՎԱՆՁԱԴԵ

ՀՈՒՇԱՊԱՏԿԵՐՆԵՐ

*Հայաստանի ազգային գրադարանը հրատարակել է
«Շիրվանգադե Հուշապատկերներ» գիրքը*

2018 թվականին Հայաստանի ազգային գրադարանը հրատարակել է «Շիրվանգադե Հուշապատկերներ» գիրքը՝ նվիրված հայ գրող, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանգադեի ծննդյան 160-ամյակին:

Շնորհանդեսը տեղի կունենա նոյեմբերի 22-ին, ժամը 14:00-ին Հայաստանի ազգային գրադարանում:

Գիրքը կազմել, ինչպես նաև ծանոթությունների հեղինակն է տնտեսական մշակութաբան,

հրապարակախոս Խաչատուր Դադայանը, խմբագիրն է Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը, տպագրվել է Էդիթ Պրինստ հրատարակչությունում:

Այն Շիրվանգադեի հուշագրությունն է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի, գրողներ Սիամանթոյի, Բաֆֆու, Գամառ Քաթիպայի (Ռաֆայել Պատկանյան), Գաբրիել Սունդուկյանի, Պերճ Պռոշյանի, Ղազարոս Աղայանի, խմբագիրներ Գրիգոր Արծրունու, Աբգար Հովհաննիսյանի, Ավետիք Սպանդարյանի, Ալեքսանդր Քալանթարի, Համբարձում Առաքելյանի, Սպանդար Սպանդարյանի, մշակութային գործիչ Կոնստանդին Խատիսյանի և դերասան Պետրոս Ադամյանի մասին:

Զետեղված է նաև Վարդգես Ահարոնյանի հուշագրությունը Շիրվանգադեի մասին:

Առանձին գրքով լույս է տեսել առաջին անգամ:

*Հայաստանի ազգային գրադարան,
Նիստերի սրահ, 2-րդ հարկ
Մուտքը՝ Տերյան 72*

